«Հաստատում եմ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,

ոստիկանության գեներալ-մայոր

_____ Մ.Ա.ԲԱԲԱՅԱՆ

«08» _____ 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Էդգար Սուրենի Կարապետյանի՝ «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ ԺԲ. 00.05՝ «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ս.Մնացականյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Դ.Ռ.Հունանյանի, քննարկեց Էդգար Կարապետյանի՝ «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ ԺԲ.00.05՝ «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին.

Էդգար Կարապետյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Հասարակության քաղաքակրթության մակարդակի կարևոր ցուցանիշներից մեկը անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանվածության աստիճանն է: Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ անչափահասների նորմալ հոգեֆիզիոլոգիական և բարոյական զարգացումը հասարակական առաջընթացի անհրաժեշտ երաշխիքն է:

Անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր ուղղություններից մեկը քրեաիրավական պաշտպանությունն է, որն իրականացվում է անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների քրեականացման և դրանք կատարող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ձևով:

Անչափահասների իրավունքների և օրինական շահերի դեմ ուղղված հանցագործությունների շարքում իրենց հանրային վտանգավորության բնույթով և աստիճանով առանձնանում են սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները: Վերջիններիս հանրային վտանգավորությունն ավելի է բարձրանում, երբ դրանք զուգորդվում են բռնության կամ դրա սպառնալիքի գործադրմամբ:

Միևնույն ժամանակ, դատաքննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են անչափահասների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված բռնի հանցագործությունների որակման մի շարք վիճահարույց հարցեր: Այդ հարցերի լուծումը պահանջում է համապատասխան քրեաիրավական նորմերի համակարգված վերլուծություն, դատաքննչական պրակտիկայի ընդհանրացում, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուսումնասիրություն:

Վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ անչափահասների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված բռնի հանցագործությունների քրեաիրավական բնութագրին առնչվող հարցերը խիստ արդիական են և ատենախոսության մակարդակով դրանք հետազոտելու համար նշանակալի:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տարբեր դրսևորումների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը, քննարկվող հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմերի օրենսդրական կատարելագործմանը և լրամշակմանը միտված առաջարկների մշակումը:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար առաջ են քաշվել հետազոտության ճիշտ առաջադրված խնդիրներ, որոնք էլ կանխորոշել են աշխատանքի կուռ տրամաբանական կառուցվածքը:

Հետազոտությունը սկսվում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ընդհանուր բնութագրի ուսումնասիրությամբ, որի շրջանակներում ատենախոսը սահմանում է քննարկվող հանցագործությունների հասկացությունը, առանձացնում է դրանց տեսակները, կատարում է արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ տվյալ հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի համեմատաիրավական հետազոտություն, ինչպես նաև տալիս է այդ հանցագործությունների կրիմինալոգիական ընդհանուր բնութագիրը:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը հանգամանորեն վերլուծում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ հատկանիշների քրեաիրավական բնութագիրը՝ քննարկման առարկա դարձնելով տվյալ հանցագործությունների օբյեկտի և օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտիվ հատկանիշների քրեաիրավական բնութագրի հետազոտությանը, որի շրջանակներում ատենախոսը վերհանել է տվյալ հանցագործությունների սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, ինչպես նաև այդ հանցագործությունների տուժողների տարիքին առնչվող որոշ հարցեր:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է կատարված հետազոտության արդյունքները, մատնանշում ատենախոսության առավել նշանակալի դրույթները, շարադրում է հիմնական հետևություններն ու առաջարկությունները:

Միանշանակ դրական գնահատականի են արժանի ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնցով, անկասկած, ապահովվել է աշխատանքի գիտական նորույթը: Հատկապես ուշագրավ է պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը, որում ատենախոսն առաջարկում է ընդլայնել բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ծանրացնող հանգամանքներից մեկի շրջանակները՝ առավել խիստ պատիժ նախատեսելով նաև վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից տվյալ հանցանքները կատարելու համար, ումից երեխան գտնվում է աշխատանքային կամ ծառայողական կախվածության մեջ: Կարծում ենք, որ ատենախոսի առաջարկը լիովին հիմնավորված է և բխում է քրեական իրավունքի գիտության մեջ մշակված՝ օրենսդրական մակարդակում արդարության սկզբունքի իրացման և քրեական

պատասխանատվության տարբերակման չափանիշներից: Միանգամայն իրավացի և հիմնավոր ենք համարում նաև պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթում ատենախոսի կողմից արված առաջարկությունն այն մասին, որ անօգնական վիճակի օգտագործումն անհրաժեշտ է նախատեսել որպես անառակաբարո գործողությունների ծանրացնող հանգամանք: Գտնում ենք, որ այդ առաջարկի իրագործումը թույլ կտա ապահովել արդարության և քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքի լիարժեք իրագործումը տվյալ արարքը կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելիս:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունը ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծ քանակության աղբյուրների օգտագործմամբ և հարուստ փորձառնական հիմքով: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևություններն ու առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ատենախոսության վերաբերյալ հետևյալ նկատառումները՝

1. Քննարկելով անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը և տեսակները՝ ատենախոսը գրում է, որ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունները անմեղսունակ անձի նկատմամբ պետք է քննարկվեն ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 138-ի կամ 139-ի շրջանակներում, որպես տուժողի անօգնական վիճակն օգտագործելով կատարված բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ (էջ 19): Կարծում ենք, որ տվյալ համատեքստում «անմեղսունակ» եզրույթի օգտագործումը ճիշտ չէ հետևյալ հիմնավորմամբ: Նախ, ինչպես գիտենք, «անմեղսունակությունը» կոնկրետ հասկացություն է, և ընդհանրապես անմեղսունակ մարդ գոյություն չունի: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ անմեղսունակության վիճակում կարող է գտնվել հանրորեն վտանգավոր արարք կատարած անձը, ոչ թե տուժողը: Ուստի ճիշտ կլիներ քննարկվող համատեքստում «անմեղսունակ անձ» բառակապակցության փոխարեն օգտագործել մեկ այլ ձևակերպում, օրինակ՝ «այն անձը, ով հոգեկան խանգարման հետևանքով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից»:

2. Ատենախոսության առաջին գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքներով ատենախոսը տալիս է սեռական հանցագործությունների հեղինակային բնորոշում (էջ 28), որը, մեր կարծիքով, բավականին հաջողված է և ներառում է սեռական հանցագործությունների բոլոր էական հատկանիշները: Սակայն ատենախոսության եզրակացության երկրորդ կետում ատենախոսն առաջարկում է այդ բնորոշումը նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքում (էջ 148): Կարծում ենք, որ սեռական հանցագործությունների բնորոշումն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ բնորոշումը առավելապես կրում է գիտատեսական բնույթ, և քրեական օրենսգրքում դրա բացակայությունը չի կարող խոչընդոտել համապատասխան քրեաիրավական հարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը:

3. Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքներով ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների պարտադիր հատկանիշ պետք է լինի տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ զուգորդվելը: Ատենախոսն իր այդ կատեգորիկ պնդումը ամրագրել է տվյալ պարագրաֆի եզրափակիչ հատվածի առաջին կետում ներկայացված օրենսդրական առաջարկության մեջ (էջ 122), ատենախոսության եզրակացության յոթերորդ կետում (էջ 155) և պաշտպանության ներկայացված առաջին դրույթում (էջ 9): Սակայն ատենախոսության այլ հատվածներում ատենախոսն անում է մեկ այլ պնդում, որը շեղվում է վերոնշյալ կատեգորիկ պնդումից: Մասնավորապես, ատենախոսը գրում է՝ «Կարելի է նաև ներթափանցմամբ զուգորդված սեռական բնույթի գործողությունները նախատեսել որպես քննարկվող հանցագործության որակյալ տեսակ, քանզի ոչ բոլոր սեռական բնույթի գործողություններն են կապված տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ, օրինակ՝ լեսբոսության շատ դրսևորումներ կամ մանուալ սեքսի որոշ դրսևորումներ կապված չեն ներթափանցման հետ» (էջեր 55, 150): Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ, որ ատենախոսն առավել հստակեցներ իր վերջնական դիրքորոշումը քննարկվող հարցում, ինչն առավել հիմնավոր կդարձներ ատենախոսի պնդումները և կբացառեր ատենախոսության տարբեր հատվածների միջև ներքին հակասությունները:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Էդգար Կարապետյանի ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից

ներկայացնում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագրին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Էդգար Սուրենի Կարապետյանի «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի 2020թ. հունվարի 8-ի նիստում, արձանագրություն № 5:

Ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
ոստիկանության փոխգնդապետ Հ.Խաչատրյան

Հ.Խաչատրյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ,
ինքը և կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների
բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյան